

8 East View Terrace
Demarest, NJ 07627

Թիւ 27044
Հոկտեմբեր 17, 1980

Մեծայարգ
Տիար Արմէն ճէրէնեան
Նիւ Եորք.

Յարգելի Տիար ճէրէնեան,

Այսու զիրով կը տեղեկացնենք ֆեզի որ Կիրակի նոյեմբեր 16, 1980, յաւարա Ս. Պատարագի Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն պիտի կատարուի ծեր սիրելի արկնոջ Բերսարէ ճէրէնեանի հոգիին համար:

Տրուած ըլլալով որ այդ Կիրակին մեթի պիտի կատարագենք եւ նախազահենք Հոգեհանգստեան արարողութեան, շնորհակալ պիտի ըլլանք եթէ բարեհաջիք ծեր արկնոջ ամփոփ կենսազրականը ղըրկել մեզի:

Կ'աղօթենք որ Տէրը յաւիտենական հանգիստ պարգեւէ Բերսարէ ճէրէնեանի հոգիին, իսկ ծեզի ալ երկնային միսիթարութիւն, քաջառողջութիւն ու յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ